ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 10 *Общественные науки*

Ն. Աղայան

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՆ ԵՎ. ԲԱՔՎԻ 1918 Թ. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բաքվի հերոսական պրոլետարիատը, որը աճեց ու զարգացավ մեծ Ստալինի գլխավորությամբ, հերոսական էջեր է գրել մեր երկրի ռեոլուցիոն պայքարի պատմության մեջ։ Նա եղել է սովետական կարգերի համար մարտնչող առաջավոր ջոկատներից, որը պայքարելով մեր ժողովրդի ազատության համար, անսասան պահեց Լենինի—Ստալինի հաղթական դրոշը։

Ընկեր Ստալինը 1901 թվին իր՝ «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիան և նրա մերձավորագույն խնդիրները» հայտնի աշխատության մեջ այսպես է բնորոշում բանվոր դասակարգի դերը. «Միայն բանվոր դասակարգը և ընդհանրապես ժողովուրդը, որը պայքարում կորցնելու ոչինչ չունի բացի իր շղթաներից,—միայն նրանք են իրենցից իսկական ռեվոլուցիոն ուժ ներկայացնում»[1]։ Ընկեր Ստալինը ջախջախիչ հարված հասցրնելով Անդրկովկասի նացիոնալիստներին կոփում էր բանվոր դասակարգի միասնությունն ու նրա դասակարգային գիտակցությունը։

Բաքուն, որտեղ 20-րդ դարի սկզբից արագ զարգանում էր կապիտալիստական նավթային արդյունաբերությունը և բանվոր դասակարգը ձևավորվում էր որպես մի միասնական ուժ, ընկեր Ստալինի ռևոլուցիոն գործունեության կարևոր օջախը դարձավ։ Բաքվի հերոսական պրոլետարիատը մեծ Ստալինի դլխավորած բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ հերոսական պայքարի պանծալի ուղի անցավ, դառնվելով համառուսաստանյան ռեոլուցիոն բանվորական շարժման առաջավոր շարքերում։

Նախառեոլուցիոն Բաքվի մասին շատ ցայտուն բնորոշում է տվել ընկ. Միկոյանը. «Բաքուն զարգացած, բարձր կազմակերպված կապիտալիզմի խոշորագույն կենտրոնն է, որը հազարավոր թելերով կապված է համաշխարհային բանկային կապիտալի հետ։

Բաքուն ռևոլուցիոն պրոլետարների, պրոլետարական կազմակերպվածության, դասակարգային սուր պայքարի քաղաք է։

Բաքուն ազգային հակասությունների ամենաբարդ հանգույցն է, հակասություններ, որ օգտագործում է բուրժուազիան բանվորներին և գյուղացիներին անջատելու համար, պրոլետարական շարքերը կազմալուծելու և նրանց միջավայրը մանր-բուրժուական ազդեցություններ մտցնելու համար։

Բաքուն սև ոսկու քաղաք է, գեպի որը ագահությամբ իր հայացքն է

---

[1] Ի. Ստալին, Երկեր, հ. I, էջ 28։

[2] Լ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը. Երևան, 1935, էջ 131։

ուղղում համաշխարհային իմպերիալիզմը, Կովկասի այդ մարդարիտը վերածելով կովախնձորի, իմպերիալիստական խմբերի միջև»։[1]

Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը Ստալինի ղեկավարությամբ աճեցրեց մի շարք տաղանդավոր, անձնուրաց ռեոլուցիոն գործիչներ, ինչպիսիք էին Ս. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Ի. Ֆիոլետովը, Ի. Մալիգինը, Գ. Զեինը, Գ. Կորդանովը, Ա. Ամիրյանը, Ս. Հովսեփյանը և շատ ուրիշներ, որոնք ընկեր Ստալինի և Մոլոտովի բնորոշմամբ «իրենց արյունով նվաճեցին սոցիալիզմի շինարարության իրավունքը...»։[2]

* * *

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի հաղթանակից հետո Բաքվում սկսվեց գործադուլների և բանվորական միտինգների մի հսկա ալիք։ Բաքվի պրոլետարիատի՝ մարտի 3-ի վիթխարի գործադուլը պայքարի կոչեց ողջ աշխատավորությանը, իսկ մարտի 6-ին Պետերի և Մոսկվայի օրինակով բանվորական և զինվորական դեպուտատների սովետներ կազմվեցին։

Ընկեր Ստալինը 1918 թ. մարտի 14-ին «Պրավդայում» գրում էր. «Կայծակի արագությամբ առաջ է շարժվում ռուսական ռևոլուցիայի կառքը։ Աճում ու լայնանում են ամենուրեք ռեոլուցիոն մարտիկների ջոկատները։ Արմատից խախավում և ընկնում են հին իշխանության հիմքերը։ Այժմ, ինչպես և միշտ, առաջից ընթանում է Պետրոգրադը։ Նրա հետևից շարժվում է, երբեմն սայթաքելով, անծայրածիր պրովինցիան»։[3]

Մարտի 8-ին աքսորավայրից Բաքու վերադարձավ բոցաշունչ բոլշևիկ, Բաքվի պրոլետարիատի սիրելի Ստեփան Շահումյանը, որն արդեն հեռակա կարգով ընտրվել էր Բաքվի սովետի նախագահ։

Բաքվում սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակը Լենինի—Ստալինի պարտիայի համար անխուսափելի էր։ Ուշագրավ է այդ տեսակետից մեծ Ստալինի աշակերտ Ալյոշա Ջափարիձեի մի զրույցը իր բարեկամի հետ։ Ջափարիձեն իմպերիալիստական պատերազմի տարիներին ռեոլուցիոն աշխատանք էր տանում Կովկասյան բանակի զինվորների մեջ։ Փետրվարյան ռևոլուցիայից անմիջապես հետո նա Բաքու հրավիրվեց։ Գնացքում Ջափարիձեն իր ծանոթներից մեկի հարցին այսպես է պատասխանել. «Գնում եմ Բաքու ռևոլուցիա անելու»։ «Ինչպես, միթե այն չի արված» զարմանքով հարցնում է խոսակիցը։

«Ո՛չ, դուք կլսեք մի ուրիշ, իսկական բանվորական ռևոլուցիայի մասին։ Հսկայական ուժեր են հասունացել և շուտով կհորդեն։ Մի քանի ամսվա բան է»։[4]

Լենինի—Ստալինի կուռ բանակը երկրի բոլոր ծայրամասերից շտապում էր դեպի բանվորական խոշոր կենտրոնները գլխավորելու այդ նոր բարձրացող սոցիալիստական ռևոլուցիան, «իսկական բանվորական ռևոլուցիան»։

---

[1] А. Микоян, «Заря Востока», № 218, 1928 г. 20 сентября.
[2] «Правда». 30 XII 1935 г.
[3] Ի. Ստալին, Երկեր, հատոր 1, էջ 3.
[4] Э. Бурджалов, „26 бакинских комиссаров", Госполитиздат, 1938. стр. 10.

«Բոլշևիկյան այն պանծալի տրադիցիաները, գրում է ընկ. Բերիան, որոնք պատվաստել էր մեծ Լենինի ամենամերձավոր զինակից ընկ. Ստալինը, Բաքվի պրոլետարիատին առաջ մղեցին ռևոլուցիայի հաղթանակի համար, պրոլետարիատի դիկտատուրայի համար, սոցիալիզմի հաղթանակի համար պայքարող առաջավոր մարտիկների շարքը»։[1]

Բաքվի պրոլետարիատը և նրա ավանդարդ բոլշևիկյան պարտիան զինված Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսներով և պարտիայի 6-րդ համագումարի որոշումներով, հսկայական աշխատանք ծավալեցին բանվորական շերջաններում։

Բաքվի բոլշևիկների կոնֆերանսը մեծ խանդավառությամբ միացավ պարտիայի VI համագումարի որոշումներին և նշեց, որ «միայն բուրժուազիայի հետ լիովին խզվելը և իշխանությունը ռեոլուցիոն դեմոկրատիայի ձեռքն անցնելն է հնարավորություն տալիս ակտիվորեն պայքարել կոնտրռևոլուցիայի դեմ»։[2]

1917 թ. սեպտեմբերի 27-ին Բաքվի բոլշեիկները՝ կատարելով մեծ Ստալինի ցուցումները, վիթխարի գործադուլ կազմակերպեցին ընկ. Ջափարիձեի ղեկավարությամբ, որը տևեց մինչև հոկտեմբերի 2-ը և վերջացավ նավթարդյունաբերողների հետ կոլեկտիվ պայմանագիր կնքելով։

Գործադուլավորների և նավթատերերի միջև հաշտարարի դեր կատարելու նպատակով երկու օր ուշացումով Բաքու ժամանեց ժամանակավոր կառավարության աշխատանքի մինիստր մենշևիկ Դվոզդևը։ «Մենք գործադուլն ավարտեցինք առանց Ձեզ,—ասաց նրան Ջափարիձեն,—բայց եթե Դուք նույնիսկ գործադուլի ժամանակ գայիք, ապա այն ժամանակ էլ Ձեր գերը զերոյի կհավասարվեր... Ներկա ռեոլուցիոն ժամանակում պետության գլուխ պետք է կանգնեն ոչ թե միջնորդ գրասենյակները, այլ իսկական դեմոկրատիայի վրա հենվող ուժեղ և վճռական ռեոլուցիոն իշխանությունը»։[3] Բաքվի բանվորների սեպտեմբերյան գործադուլը մեծ նշանակություն ունեցավ աշխատավորների քաղաքական կազմակերպման գործում։ Բոլշևիկյան պարտիան հրապարակորեն մերկացրեց ժողովրդի թշնամիներին, ցույց տալով բոլշևիկյան պարտիայի ավանդարդային դերը և հսկայական հեղինակությունը։ Բոլշևիկյան պարտիայի կենտրոնական կոմիտեն ողջունեց «Բաքու քաղաքի ռեոլուցիոն պրոլետարիատին, որը, բաց մարտում հաղթեց կազմակերպված կապիտալին»։[4]

Ֆաբրիկա-գործարանային հանձնաժողովների կոնֆերենցիան նույնպես անցավ բոլշևիկների ղեկավարությամբ, պահանջելով ամբողջ իշխանության անցումը սովետների ձեռքը, կալվածատիրական հողերի կոնֆիսկացիա, բանվորական վերահսկողության կազմակերպում, պետական նշանակություն ունեցող խոշոր ձեռնարկությունների ազգայնացում։

* * *

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեոլուցիայի հաղթանակը Ռուսաստանում Բաքվի ռեոլուցիոն շարժման մեջ մի նոր թափ մտցրեց։ «Ամ-

[1] Լ. Բերիա. Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը. Երևան, 1945 թ., էջ 218։

[2] „Бакинский рабочий" № 48. 1917 г.

[3] «Бакинский рабочий» № 62, 1917 թ. հոկտեմբերի 6-ին։

[4] «Рабочий путь» № 29, 1917 г.

բողջ իշխանությունը բանվորներին ու գյուղացիներին» կանչը որոտալից տարածվեց ամբողջ երկրով մեկ, ոտքի հանելով ճնշված մասսաներին»։[1]

Բաքվի բոլշևիկները ամենայն վճռականությամբ էին պայքարում, հանուն սովետական կարգերի հաղթանակի Բաքվում և ամբողջ Անդրկովկասում։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիան աղատագրական մի վիթխարի շարժում առաջացրեց մեր երկրի բոլոր աշխատավորների մեջ։ Մեծ Հոկտեմբերը ամենաջերմ արձագանք գտավ Բաքվի հերոսական պրոլետարիատի մեջ, որտեղ խոր արմատներ էր թողել ստալինյան տրադիցիան։ Ընկեր Ստալինը 1918 թվին «Պրավդայում» գրում է «... ռևոլուցիոն պրոլետարական Բաքուն, որը Հոկտեմբերյան ռևոլուցիայի առաջին իսկ օրերից ճանաչել է Սովետական իշխանությունը և անդուլ պայքար է մղում Անդրկովկասյան կոմիսարիատի դեմ, չէր թողնում, որ անդրկովկասյան պրոլետարիատը քնի, նրա համար վարակիչ օրինակ և սոցիալիզմի ուղին լուսավորող կենդանի փարոս էր ծառայում»։[2]

Ռևոլուցիոն վերելք ստեղծվեց Անդրկովկասի բոլոր ծայրամասերում։ Միանգամայն պարզ է, որ ինչպես գրում է ընկ. Ստալինը «Հյուսիսից եկող սովետական ռևոլուցիայի ալիքը համարձակ ներս էր խուժում անդրկովկասյան կոալիցիայի թագավորությունը, սպառնալով նրա գոյությանը»։[3] Ետ չէր մնում նաև Անդրկովկասի գյուղացիությունը։ Ռազմաճակատից վերադարձած զինվորները գլխավորում էին ագրարային ռեոլուցիոն շարժումները գյուղում։ «Ճորտատիրական մնացորդների հիմքերը վճռական գրոհի ենթարկվեցին «բոլշևիկացած» զինվոր-գյուղացիների կողմից»։

Բաքվի բոլշևիկները ուժեղ պայքար ծավալեցին բուրժուական դումայի և Բաքվի սովետում տեղ դտած մենշևիկների, էսեռների, մուսավաթիստների ու դաշնակների դեմ։ Այդտեղ էր տաղանդավոր բոլշևիկ Մաշադի Ազիզբեկովը, որ ուժեղ պայքար էր տանում դումայում, մերկացնելով ժողովրդի թշնամիներին։ Մ. Ազիզբեկովը դումայի նիստում հայտարարում է, որ իր դարն ապրած դուման պետք է իր տեղը զիջի դեմոկրատիային, բայց նա այդ չարից և «մենք ինքներս ենք եկել ամբողջ գործը մեր ձեռքը վերցնելու»։

Բոլշևիկների այդ պահանջը, որ աշխատավոր մասսաների շահերից է ելնում, շուտով իրականություն դարձավ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլուցիայից հետո ստեղծված պայմանները հմուտ կերպով օգտագործեցին Բաքվի բոլշևիկները։ «Բաքվի բոլշևիկները,—գրում է ընկ. Բերիան, լրիվ օգտագործեցին 1918 թվականի սկզբների ռեոլուցիոն իրադրությունը։

Լենինի և Ստալինի ղեկավար օգնությամբ Բաքվի բոլշևիկները Ս. Շահումյանի և Ա. Ջափարիձեի գլխավորությամբ նվաճեցին պրոլետարական ռևոլուցիայի հաղթանակը»։[5]

---

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 60։
[2] Նույն տեղում, էջ 68—69։
[3] Նույն տեղում, էջ 67։
[4] Նույն տեղում, էջ 68
[5] Լ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, Երևան, 1946 թ., էջ 224։

Բաքվի սովետը 1917 թ. նոյեմբերի սկզբների կոչերից մեկում հայտարարում է. «Կեցցե՛ Պետերբուրգի ռեոլուցիոն պրոլետարիատն ու կայազորը։ Կեցցե՛ ռեոլուցիոն նոր կառավարությունը Լենինի գլխավորությամբ։ Կեցցե՛ Սովետների իշխանությունը»։[1]

1917 թ. հոկտեմբերի 31-ին Բաքվի բոլշևիկները Բաքվի սովետի ընդլայնած նիստում որոշում ընդունեցին ամբողջ իշխանությունը բանվորական, զինվորական և գյուղացիական դեպուտատների սովետներին անցնելու մասին, իսկ նոյեմբերի 2-ին Ս. Շահումյանի ղեկուցման առթիվ ընդունվեց իշխանությունը գործնականապես սովետներին անցնելու ծրագիրը։ Այդ նույն ժամանակ ժողովրդի թշնամիների՝ մենշևիկների, էսեռների, ուսավաթիստների ու դաշնակների կոնտրռևոլուցիոն բլոկը իր դազրելի աշխատանքն էր տանում։

Բաքվի բոլշևիկները իշխանությունը լիովին նվաճելու և կոնտրռևոլուցիային վերջ տալու նպատակով աշխատավոր ժասսային պատրաստում էին զինված պայքարի, փողոցային մարտերում թշնամու ուժերը ջախջախելու համար։ Նրանք՝ առաջնորդվելով մեծ Ստալինի ցուցումներով, որ կոչ էր անում «... ամբողջ Ռուսաստանի գյուղացիներին, ամբողջ գյուղացիական չքավորությանը—իր գործն իր սեփական ձեռքը վերցնել և այն առաջ շարժել»։[2]

Ստեփան Շահումյանը, հետևելով մեծ Ստալինի ցուցումներին, առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում ճնշված գյուղացիական լայն ժասսաներին իրենց բռնակալ տերերի դեմ ոտքի հանելու խնդրին։ Նա սովետական կառավարության անունից հրատարակած իր կոչում գրում էր.

«Գյուղացի եղբայրներ, հասել է ժամը, երբ գուք վերջնականապես պետք է նետեք ձեր ուսերից կալվածատեր-հողատերերի, խանների, բեկերի, աղալարների դարավոր լուծը...»։[3]

Մեծ Հոկտեմբերը քաղաքական մի հսկայական շարժում էր առաջացրել ոչ միայն բանվորական կենտրոններում, այլև դարավոր քնից արթնացրել էր Ֆեոդալական խավարում խարխափող գյուղական վայրերը։ Հողի մասին սովետական իշխանության դեկրետի լուրը թափանցել էր գյուղ և ոտքի հանել գյուղացիական ճնշված ժասսաներին։ Ս. Շահումյանը իր նույն կոչում գրում է. «Բանվորա-գյուղացիական կառավարության կողմից ես ողջունում եմ ձեր այդ արթնացումն ու պայքարը... Աշխատեցեք որպեսզի մուսուլման գյուղացիները ամենուրեք կազմակերպված գրավեն բեկերի հողը։ Ստեղծեցեք գյուղացիական կոմիտեներ, որոնք պետք է վերցնեն այդ հողերը»։[4]

Գյուղացիական հուժկու ելույթները 1918 թ. ընդգրկեցին Ադրբեջանի մի շարք շրջաններ (Գանձակ, Ղուբա, Ղազախ, Շամախի և ուրիշ տեղեր)։ Բաքվի բոլշևիկների ծավալած աշխատանքը իր արդյունավետ պտուղները տվեց։ Աշխատավոր ժասսաները պայքարի էին դուրս գալիս բոլշևիկյան լոզունգներով։

Շահումյանն իր «Գյուղացիական ապստամբությունն Անդրկովկասում»

---

[1] „Бакинский рабочий", 1917 թ., № 76.
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 3, էջ 40։
[3] Ս. Շահումյան, հատոր 2. Երևան, էջ 125։
[4] Նույն տեղում։

հոդվածում նշում էր, որ Գանձակի գավառում «... հրկիզվեցին կալվածատերերի բոլոր կալվածները, կոտորվեցին հայարյա բոլոր իսաներն ու բեկերը իրենց ընտանիքներով և նրանց հողերն ու գույքը գրավվեցին գյուղացիների կողմից ... մուսուլման գյուղացիության շարժման աղդեցությամբ ագրարային շարժում է պատրաստվում նաև հայկական գավառում»[1]

Բաքվի բոլշևիկները առանձնապես Ստ. Շահումյանը և Մաշագի Ազիզբեկովը անձամբ շրջում են Ագրբեջանի բազմաթիվ գյուղեր, գլխավորելու երկրում սկսված այդ հուժկու գյուղացիական-ագրարային շարժումը։ Շահումյանը 1918 թ. հունվարին շրջելով գյուղերը, անգնահատելի աշխատանք կատարեց։ Նա հունվարի 13-ին Գանձակից դուրս եկավ և 10 օրում Շամխորի ու Ղազախի վրայով Թիֆլիս հասավ։

Մի շարք գյուղերում Շահումյանը հիմք դրեց բոլշևիկյան պարտիայի բջիջների։ Հայտնի է, օրինակ, որ նա գաղտնի ժողով հրավիրեց հայ ժողովրդի պանծալի զավակ գեներալ Բաղրամյանի հայրենի Զարդախլու գյուղում և հիմք դրեց բոլշևիկյան կազմակերպության։ Շահումյանը կոչ արեց բոլշևիկորեն գլխավորելու Շախմորում բարձրացող գյուղացիական շարժումները։ Նա պահանջում էր բոլոր հողերը կոնֆիսկացիայի ենթարկել և հանձնել գյուղական կոմիտեներին։ Այդ աշխատանքի հետևանքն էր, որ կարճ ժամանակում Շամխորում գյուղացիական մեծ շարժում սկսվեց և ապստամբ գյուղացիները գրավեցին կալվածատիրական հողերը, հրդեհեցին բեկերի տները և սրի քաշեցին հայտնի կալվածատերեր Զուլկուդարովներին ու մյուս բեկերին։ Հուտով Շահումյանը հեռագրով հայտնեց չարդախլուեցիներին. «Սերմերը պատրաստ են, գութանները լծեցեք»։ Այդ նշանակում էր, որ ռևոլուցիոն սիտուացիան արդեն հասունացել է, պատրաստ պետք է լինել ապստամբության։

Ս. Շահումյանի գործունեության մասին 1918 թ. մարտի 7-ին Շամխորից հաղորդում են. «...Բոլշևիկ Շահումյանը պրոպագանդայի նպատակով Թոուզ կայարանի վրայով մեկնեց հայկական գյուղերը... ցանկանալով կանխել հայ-թուրքական կոտորածը, Շահումյանը... գյուղացիներին գրգռում էր կալվածատերերի դեմ»։[2]

Սակայն Անդրկովկասյան կոմիսարիատը մենշևիկների, էսեռների, մուսավաթիստների ու դաշնակցականների այդ կոնտրռեվոլուցիոն կառավարությունը ամենաղաժան միջոցներով ճնշում էր ժողովրդի ազատությունը։ Նա էր, որ արյունոտ թաթը բարձրացրեց թուրքական ռազմաճակատից վերադարձող ռևոլուցիոն զինվորների վրա և Շամխոր Ելկայարանի մոտ մի զազրելի կոտորած կազմակերպեց։

Շամխորի կոտորածը աշխատավոր ժողովրդի մեջ մեծ զայրույթ առաջ բերեց։ Ժողովրդի կամքն արտահայտող Ստեփան Շահումյանը իր բողոքի ձայնը բարձրացնելով գրեց. «Ռուսաստանի հանրապետության կենտրոնական կառավարության անունից ես բողոքում եմ այդ չլսված չարագործության դեմ։ Թափվում է այն զինվորների անմեղ արյունը, որոնք երեք տարվա ընթացքում անձնազոհությամբ պաշտպանում էին Կովկասի սահմանները, ճակատամարտի դաշտում և Հայաստանի քաղաքներում

[1] Ս. Շահումյան, Հոդվածներ և ճառեր, 1917—1918 թթ., 1929 թ. էջ 91—93.
[2] Партархив при ЦК КП (б) Азербайджана, ф. Аграрный вопрос, оп. 5. д. 56.

թողնելով իրենց տասնյակ հազարավոր եղբայրներին։ Անդրադարձեն հափշտակվում է Ռուսաստանի հանրապետությանը պատկանող զենքը։ Այս ծանր ոճրագործության մեղավորները չեն կարող անպատիժ մնալ։[1]

Լենինը և Ստալինը ձեռք առան բոլոր հնարավոր միջոցները ապահովելու Անդրկովկասում սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակը։

Լենինը 1918 թ. փետրվարի 14-ին Շահումյանին ուղղված նամակում գրում էր.

«Թանկագին ընկեր Շահումյան, շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հիացած ենք ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությամբ։ Կարողացեք միացնել դրան ամենազորություն դիվանագիտություն, որն անպայման նախադրվում է ներկայիս դժվարագույն դրությամբ,—և մենք կհաղթենք»։[2]

* * *

Բաքվի սովետը իր մարտի 2-ի որոշումով հանձնարարեց «Գործադիր Կոմիտեին՝ հոդալ Բաքվի նահանգի մուսուլման բանվորների ու մուսուլման գյուղացիության մեջ, և ամբողջ Անդրկովկասում տարվող հատկապես ագիտացիոն և կազմակերպական աշխատանքի մասին։ Պարզաբանել նրանց,որ Բաքվի պրոլետարիատը մուսուլման բանվորներին ու գյուղացիներին իր եղբայրներն է համարում և կողմնակից է ամբողջ աշխատավորական ժողովրդի եղբայրության ընդհանուր իդեալների՝ առանց ազգությունների խտրության»։[3]

Գյուղացիական հարցը, նրանց դաշինքի ամրապնդումը բանվոր դասակարգի հետ, Բաքվի բոլշևիկների համար շատ կարևոր խնդիր էր։ «Մեր ամբողջ նախկին քաղաքականությունը,—գրում է Ջափարիձեն, հանգում էր այն բանին, որպեսզի գյուղացիներին կազմակերպելու համար անհրաժեշտ ժամանակ շահեինք։ Մենք գիտեինք, որ մենք հարկադրված կլինենք գոտեմարտի դուրս գալու կոնտրռևոլուցիայի դեմ, և պատրաստվում էինք դրանց»։[4]

Բաքվի սովետը իր ձեռքը վերցրեց ֆինանսական հարցի լուծումը։ Բոլոր բանկերում նշանակվեցին Բաքվի սովետի կոմիսարները։

Բաքվի աշխատավորության տնտեսական վիճակը շատ ծանրացրել էր։ Անդրկովկասյան կոմիսարիատը և նրա գործակալները ջանում էին սովով խեղդել Բաքվի ռեոլուցիոն վերելքը։ Բաքվի սովետը սկզբում 4 բանվորից և 3 զինվորից պարենավորման հանձնաժողով կազմեց, որը պետք է իր հսկողության տակ առներ պարենավորման կազմակերպությունների աշխատանքը, իսկ հետո, մարտի 4-ին պարենային գործը ամբողջովին իր ձեռքը վերցրեց։

Բաքվի սովետը եռանդուն կերպով սկսեց վերացնել հին պետական ապարատը, նրա բոլոր տեսակի բուրժուական օրգանները և ստեղծել նորը, աշխատավորների շահերը պաշտպանող սովետական պետական օրգաններ։ Բոլշևիկները մշակեցին ռևոլուցիոն տրիբունալի կանոնադրությունը, որը հաստատվեց Բաքվի Սովետում։ Մենշևիկներն ու էսեռները կատաղի պայքար սկսեցին, ցանկանալով վիժեցնել բոլշևիկների սոցիալիստական կարե-

[1] Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 99։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 32, Երևան, էջ 325։
[3] „Бакинский рабочий", № 51, 1918.
[4] „Известия Бакинского Совета", № 63, 1918.

վոր միջոցառումները։ Բաքվի սովետը որոշում ընդունեց իրեն ենթարկելու նաև միլիցիան՝ իր բոլոր միջոցներով։ Ընկ. Ջափարիձեն անթույլատրելի էր համարում, որ որևիցե զինված ուժ գտնվի ուրիշ օրգանի տեսչության տակ։

Բաքվի սովետի սոցիալիստական միջոցառումները կենսագործելու խնդրում կարևոր դեր էր կատարում բոլշևիկյան մամուլը։ «Բակինսկի բարոչի» թերթը, որի տաղանդավոր խմբագիրն էր Ս. Շահումյանը, իսկ 1918 թ. սկզբից Արսեն Ամիրյանը, վայելում էր Բաքվի պրոլետարիատի սերն ու համակրանքը։ Նշանավոր դեր խաղաց նաև «Իզվեստիա Բակինսկովո Սովետա»-ն, որի խմբագիրն էր հմուտ ժուռնալիստ բոլշևիկ Սուրեն Հովսեփյանը։

Ռազմառևոլուցիոն Կոմիտեի նախագահ Գ. Կորգանովը մեծ աշխատանք ծավալեց Կարմիր Բանակի կազմակերպման գործում։ Այդ ուղղությամբ խոշոր աշխատանք կատարեց նաև Մալիգինը։ «Քաղաքացիական պատերազմի նոր ֆրոնտը,—գրում է Մալիգինը,—պահանջում է նաև նոր բանակ—դասակարգային բանակ։ Այդ բանակի հիմքը պետք է լինեն քաղաքային բանվորները, որպես առավել կազմակերպվածներ և գիտակիցներ, և գյուղերից այն գյուղացիները, որոնք արդեն գիտակցել են, որ անհուսալի է իրենց բարեկեցությունը կապիտալի տիրապետության օրով կառուցելը... հարկավոր է շտապ աշխատանք տանել սոցիալիստական բանակ կազմակերպելու դծով»։[1]

Ս. Շահումյանը դիմելով զինվորներին հիշեցնում էր. «Դուք այժմ հին բանակի զինվորներ չեք, այլ ձեր իսկ բանվոր-գյուղացիական բանակի մարտիկներ»։[2]

Կարմիր Բանակի հրամանատարական կադրեր պատրաստելու համար կազմակերպվեց հատուկ հրահանգչական դպրոց բոլշևիկ Սոլնցևի ղեկավարությամբ։ 1918 թ. կեսերին Բաքվում Կարմիր Բանակի զինված ուժերի թիվը հասնում էր վեց հազարի։

Ընկեր Ստալինը իր 1918 թ. մարտի 19-ի «Ստեփանին, Ալյոշային և մյուս բարեկամներին» ուղղած նամակում նշելով Բաքվի անչափ կարևոր նշանակությունը, շատ հակիրճ կերպով ցույց է տալիս Բաքվի բոլշևիկների անելիքներն ու նրանց ծրագիրը։

Լենինը և Ստալինը կոփեցին և վճռական մարտի հանեցին Բաքվի բոլշևիկներին սովետական կարգեր հաստատելու համար։ Բաքվի բոլշևիկների մարտի 19-ին կազմված ռևոլուցիոն պաշտպանության Կոմիտեն, որի մեջ մտնում էին Շահումյանը, Կորգանովը, Ջափարիձեն և ուրիշները, վճռական դեր կատարեց։ Կոմիտեն՝ դիմելով բնակչությանը, գրում էր.

«Սովետական իշխանության թշնամիները Բաքվում դլուխ են բարձրացրել։ Բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Բաքվի Սովետի Գործադիր Կոմիտեն և Կովկասյան բանակի ռազմառևոլուցիոն Կոմիտեն բոլոր ընկերներին և քաղաքացիներին հայտարարում են, որ Սովետական իշխանությունը Բաքվում վտանգի մեջ է, և բոլորին կոչ են անում զենքը ձեռքին պաշտպանել այն ժողովրդի թշնամիներից...։ Մուսուլմաններին և հայերին, բանվորներին և բոլոր ազգությունների դե-

[1] „Бакинский рабочий," № 40, 1918.

[2] Նույն տեղում, № 214, 1925.

ժոկրատական տարրերին մենք կոչ ենք անում չենթարկվելու շովինիստական տարրերի պրովոկացիային և ներկա վճռական ժամենտին անվեհեր կերպով զենքը ձեռքին կանգնելու Բաքվի հեղափոխական պաշտպանության Կոմիտեի կարմիր դրոշի տակ»։[1]

Մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը կատաղի մարտերում Բաքվի պրոլետարիատը մուսավաթական բանդաներին և Սովետական իշխանության մյուս թշնամիներին ջախջախելով, ապահովեց սովետների լիակատար իշխանությունը Բաքվում։

Ընկեր Ստալինը մեծ հիացմունքով է խոսում Բաքվի պրոլետարիատի մարտյան փայլուն հաղթանակի մասին։ Ստեփան Շահումյանը 1918 թ. մարտի 13-ին Լենինին և Ստալինին ուղարկած նամակում այսպես է նկարագրում այդ խոշոր պատմական մարտերը. «Անդրկովկասը թևակոխեց Սովետական իշխանության համար մղվող ակտիվ, զինված պայքարի շրջան։ Երեք օրվա ընթացքում, մարտի 30-ին, 31-ին և ապրիլի 1-ին Բաքու քաղաքում կատաղի մարտ էր տեղի ունենում։ Մի կողմից կռվում էին Սովետական Կարմիր գվարդիան, մեր կազմակերպած Կարմիր ինտերնացիոնալ բանակը, Կարմիր նավատորմը, որ մեզ հաջողվել էր վերակազմակերպել կարճ ժամանակամիջոցում... Մյուս կողմից վայրենի ... դիվիզիան, որի մեջ քիչ չեն ռուս սպաները և «Մուսավաթ» պարտիայի ղեկավարած... բանդաները։ Քաղաքային մարտերին երկու կողմից ավելի քան 20 հազար մարդ էր մասնակցում... հակառակորդի ջախջախումը լիակատար է»։[2]

Բաքվի Սովետական իշխանությունը իր գոյության առաջին իսկ օրից վճռական պայքարի անցավ բուրժուա-նացիոնալիստական և բոլոր տեսակի թշնամիների դեմ, պայքարելով հին կապիտալիստական-բուրժուական կարգերի դեմ, անցկացնելով նոր՝ սոցիալիստական հասարակարգ ստեղծելու կարևորագույն միջոցառումները։

Հեղափոխության գրոհի տակ ցրվեց Բաքվի քաղաքային դուման, կոնտրռևոլուցիայի այդ բունը։

Սովետական իշխանության բոլոր թշնամիները գազանային ոռնոցներ բարձրացրին բոլշևիկյան պարտիայի անցկացրած հեղափոխական սոցիալիստական միջոցառումների դեմ։ Բանը հասավ այնտեղ, որ նրանք 1918 թ. ապրիլի 3-ին ուլտիմատիվ նամակով դիմեցին Շահումյանին և Ջափարիձեին, պահանջելով չեղյալ համարել Սովետական իշխանության առաջադրված հեղափոխական ձեռնարկումները, բայց բոլշևիկյան հզոր վճռականությունը, որ հենվում էր աշխատավոր մասսաների ստալինյան տրադիցիայով կոփված Բաքվի հերոսական պրոլետարիատի ուժերի վրա, առաջ էր ընթանում ամենայն վստահությամբ։ Հակահեղափոխական Կոմիտեն փակեց «Բաքու» և «Կասպի» բուրժուական լրագիրները և մենշևիկյան «Նաշ գոլոս» լրագիրը։

Հեղափոխությունը արագությամբ փոխեց մարդկանց գիտակցությունը, կոփեց նաև ազգերի եղբայրությունն ու բարեկամությունը։ «Բակինսկի բաբոչի» թերթը 1918 թ. ապրիլի 12-ի համարում գրում է. «Ժուսուլման,

---

[1] Партархив при ЦК КП (б) Азербайджана, св. 18, д. 825, л. 1.

[2] Նույնը, ф. Шаумяна, св. 2, д. 15.

հայ, ռուս բանվորներն այդ օրերին միասնական եղբայրական մի ընտանիք էին ներկայացնում։

Մենք մատնանշում ենք այս երևույթը որպես հսկայական կարևորություն ունեցող մի փաստ։ Մենք այն համարում ենք բանվորական շարժման մեծագույն հաղթանակը Կովկասում։

Մուսուլման բանվորները Սովետական իշխանության կողմն են։ Այստեղ արդեն կասկած չկա»։

Այդ պայմաններում ապրիլի 26-ին բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Սովետը ընտրեց Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետ Ս. Շահումյանի ղեկավարությամբ։ Կորգանովը ընտրվեց ռազմական և ծովային գործերի կոմիսար, Զափարիձեն՝ ներքին գործերի, Ֆիոլետովը՝ ժողովրդական տնտեսության, Ագիդրեկովը՝ նահանգական կոմիսար, Զևինը՝ աշխատանքի, Կոլեսնիկովան՝ լուսավորության։ «Իակինսկի բաքոչին» արտահայտելով Բաքվի աշխատավորների վստահությունը, ամենայն գոհունակությամբ նշում էր, որ Ժողկոմսովետի կազմը «լիովին երաշխավորում է մեզ այն, որ այսուհետև կվարվի բանվորա-դյուղացիական ռեոլուցիոն իսկական քաղաքականություն, սոցիալական լայն բարեփոխումների քաղաքականություն, որոնք արմատապես փոխում են աշխատավորների և շահագործողների միջև եղած փոխհարաբերությունները»[1]

Բաքվի Ժողկոմսովետը պարտավորվեց սերտ կապ հաստատել Ռուսաստանի Սոցիալիստական Ռեսպուբլիկայի հետ։

«Գործելով Լենինի և Ստալինի ցուցումներով, Բաքվի Ժողկոմսովետը սկսեց կիրառել մի շարք կարևորագույն սոցիալիստական ձեռնարկումներ,— գրում է ընկ. Բաղիրովը,—որոնց հիմնական նպատակն էր ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան, ջախջախել բուրժուազիային և ստեղծել նոր սովետական սոցիալիստական տնտեսություն»։[2]

Ժողկոմսովետը սկսեց ավելի լայն կերպով կիրառել սոցիալիստական բարեփոխումների բոլշևիկյան ծրագիրը։ Նա իր աշխատանքը սկսեց հետևյալ կոչը ուղղելով Բաքվի աշխատավորներին. «Հուսալով բանվորական մասսաների լայն աջակցության և նրանց կենդանի ստեղծագործական ինքնագործունեության վրա՝ Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետը անցնում է աշխատանքի»։[3]

Մուսավաթական բանդաները Բաքվից ոչ հեռու Խուրդալանի մոտ միացան Դաղստանից եկող խմամ Դոցինսկու գլխավորած խմբին։ Բաքուն նորից վտանգի տակ էր։ Բայց շուտով հերոսական կարմիր դիվարդիայի ջոկատները գլխովին ջարդեցին թշնամուն։

Բաքվի Սովետական իշխանությունը, բոլշևիկյան պարտիայի գլխավորությամբ, հսկայական աշխատանք ծավալեց սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում։ Մինչև մարտյան դեպքերը իրենց գոյությունը պաշտպանող հին պետական ապարատի մնացորդները ամ-

---

[1] «Бакинский рабочий», № 66, 1918.

[2] Նույնը, № 76, 1918.

[3] Մ. Դ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, Երևան, 1944թ., էջ 168։

[4] «Бакинский рабочий», № 78, 1918.

րողջովին ոչնչացվեցին։ Ներքին գործերի ժողկոմ Այլոշա Ջափարիձեի ղեկավարությամբ ոչնչացվեցին քաղաքապետության կառավարչությունը, նահանգական վարչությունը, միլիցիայի ապարատը և կազմվեց ամենավստահելի աշխատավորներից Սովետական իշխանության ներքին վարչության ապարատը։

Մայիսի 26-ին Ժողկոմսովետի դեկրետով վերացվեց դատական հին ապարատը, որի փոխարեն ստեղծվեցին տեղական և օկրուգային ժողովրդական դատարաններ։ Բացի այդ, գործում էր նաև ռևոլուցիոն տրիբունալը։ Հատուկ դեկրետ հրապարակվեց կաշառակերության և պետական գործերի չարարկությունների դեմ պայքարելու մասին։

Հսկայական աշխատանք ծավալվեց ժողովրդական լուսավորության բնագավառում։ Դպրոցական հին բուրժուական սիստեմը սկսվեց հիմնովին փոխվել։ Կազմվում էին նոր ծրագրեր ու դասագրքեր։ Ուսուցչական կազմը ամբողջովին ստուգվում և վերանայվում էր, նպատակ ունենալով մանուկ սերնդի ուսուցման ու դաստիարակման գործը հանձնելու բոլշևիկյան պարտիային նվիրված մարդկանց։ Առաջին անգամ դրվեց նաև նախադպրոցական դաստիարակության և արտադպրոցական կրթության խնդիրը։

Բաքվի սովետական կառավարությունը շրջապատված լինելով մինչև ատամները զինված թշնամիներով, գտնվում էր անչափ դժվարին պայմաններում։ Չնայած դրան, նա ձեռնարկում էր բոլոր միջոցները որբ և չքավոր երեխաների համար մանկական հրապարակներ ստեղծելու համար։ Աշխատավոր մասսայի համար բացվում էին ժողովրդական համալսարաններ և երեկոյան դասընթացներ։ Այլվեստը և կուլտուրան առաջին անգամ դառնում էր ժողովրդի սեփականություն։ Խիստ պատիժ էր սահմանվում նրանց նկատմամբ, ովքեր կցուցադրեին հակառևոլուցիոն նկարներ և կբեմադրեին «շովինիստական ոգով համակված պիեսներ»։[1]

Բաքվի Ժողկոմսովետը մեծ ուշադրություն է դարձնում բանվորների տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու գործին։ Ընկեր Ջևինի դլխավորած Աշխատանքի Կոմիսարիատին կից ստեղծվել էր աշխատանքային գործերի ժամանակավոր դատարան, որը հսկում էր բանվորների աշխատանքային պայմանների վրա։ Կազմակերպվում էին նաև բժշկա-սանիտարական և տեխնիկական հանձնաժողովներ, որոնց խնդիրն էր ապահովել բանվորների նյութական-կենցաղային և աշխատանքային պայմանները։[2]

Մեծ աշխատանք ծավալվեց կարիր բանակայինների ընտանիքներին և չքավորներին բնակարաններով ապահովելու ուղղությամբ։ Որոշվեց «անհապաղ բռնագրավել առաջին հերթին քաղաքի կենտրոնում եղած մեծ տները, դրանցում բնակեցնելով բնակարան չունեցող չքավորությանը»։[3] Ժողկոմսովետը հրամայեց «դևկրետ քաղաքային անշարժ գույքերի ժամանավոր սեփականությունը վերացնելու մասին», որի համաձայն քաղա-

[1] «Известия Бакинского Совета», № 99, 1918.

[2] Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմին կից Մոսկվայում Գարտարիով, հավաքածու 10, գործ 80, թ. 329—330։

[3] Նույն տեղում, հավաքածու 2-րդ, գործ 30. էջ 115։

քային բոլոր հողերն ու շենքերը հայտարարվում էին ամբողջ ժողովրդի սեփականություն։

Այդ տիպի գույքի եկամտի մեկ երրորդը կարող էին գործածել քաղաքային տնտեսության ընդհանուր կարիքների համար, իսկ 10 տոկոսը նոր շինարարության համար։

Բաքվի Սովետական իշխանության առաջին կարևոր ձեռնարկումներից մեկն էլ հանդիսացավ բանկերի ազգայնացումը, որ կատարվեց ընկ. Միկոյանի անմիջական մասնակցությամբ։ Պահվել է ընկ. Միկոյանի անունով հետևյալ մանդատը. Ս. Շահումյանի ստորագրությամբ. «Սույնը ներկայացնող Անաստաս Միկոյանին Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետը հրամայում է ապրիլի 29/16-ի ցերեկվա ժամը 12-ի մոտերքը դրավել Արտաքին (Առևարի) համար ռուսական բանկի և մասնավորապես մառանի մուտքերն ու ելքերը, որտեղ պահվում են սեյֆերը, և սպասել Ժողովրդական Կոմիսարների Սովետի ներկայացուցիչների ժամանելուն։ Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ Ս. Շահումյան»։[1]

Բանկերի հարստությունն օգտագործվեց ռևոլուցիայի ամրապնդման համար, հերոսական Կարմիր Բանակի, Բաքվի աշխատավորության համար, ինչպես և ժողովրդական տնտեսության վերականգնման համար։

Ամբողջ տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում մեծ դեր կատարեց ընկ. Ֆիոլետովի գլխավորած ժողովրդական տնտեսության Սովետը։

Խոշոր կապիտալիստներ Թաղիեին, Մայիլովին և ուրիշներին պատկանող ձկնորսարանները ազգայնացվում են։ Ընկ. Ստալինը պահանջում էր Մոսկվայի տեքստիլ արդյունաբերությանը բամբակ ուղարկել, որ անչափ կարևոր էր Կարմիր բանակի կարիքները ապահովելու համար։ Բաքվի ժողովրդական տնտեսության սովետը մայիսի 9-ի դեկրետով արգելեց ամեն տեսակի գործարքները և սկսվեց բամբակի մթերումը։ Մայիսի 30-ին արդեն հաշվառված էր 350 հազար փութ բամբակ, որը պետք էր Մոսկվա ուղարկել։ Հունիսի 11-ին Ժողկոմսովետի նիստում Ֆիոլետովը զեկուցեց, որ Մոսկվա է ուղարկված 153 հազար փութ և պատրաստվում է ուղարկվելու 200 հազար փութ բամբակ։

Բաքվի բոլշևիկները Լենինի և Ստալինի ցուցմունքներով ձեռնարկեցին նավթային արդյունաբերության ազգայնացման պլանին։ 1918 թ. հունիսի 2-ին հրատարակված հատուկ դեկրետով նավթային արդյունաբերությունը հայտարարվեց սովետական պետության սեփականություն։

Դեռևս 1917 թ. սեպտեմբերին Լենինը գրում էր. «Վերցրեք նավթային գործը։ Այդ գործը «հանրայնացվել է», արդեն կապիտալիզմին նախորդող զարգացումով վիթխարի չափերով։ Մի ղույգ նավթարքաներ.— ահա թե ով է տնօրինում միլիոններն ու հարյուրավոր միլիոնները, զբաղվելով կուպոններ խուզելով, հեքիաթային շահույթներ հավաքելով «գործից», որն արդեն կազմակերպված է փաստորեն տեխնիկապես, հասարակականորեն համապետական չափերով, որն արդեն կատարում են հարյուրավոր և հազարավոր ծառայողներ, ինժեներներ և այլն։ Նավթային արդյունաբերության ազգայնացումը հնարավոր է միանգամից և պարտադիր է ռևոլուցիոն-դեմոկրատական պետության համար, հատկապես երբ նա մեծա-

[1] *Сурен Шаумян*, Бакинская коммуна, стр. 107.

գույն ճգնաժամ է ապրում, երբ հարկավոր է ինչ էլ որ լինի, խնայել ժողովրդական աշխատանքը և ավելացնել վառելիքի արտադրությունը»։[1]

Բաքվի բոլշևիկները լարում էին իրենց ուժերը պաշտպանելու սոցիալիստական սեփականության այդ կարևոր ազբյուրը։ 1918 թ. մարտի 10-ին Բաքվի Սովետի Գործկոմը կոչ էր անում բանվորներին բարձր պահել ռևոլուցիոն զգոնությունը։

«Այս ծանր մոմենտին մեզ, ընկեր բանվորներ, անհրաժեշտ է առավելագույն զգաստություն և էներգիա ցուցաբերել, որպեսզի կոնտրռևոլուցիայի բորենիները չկազմալուծեն մեր ուժերը։ Մեր հերթական խնդիրն է... կազմակերպել Բաքվի նավթահանքերի—մեր երկրի ամբողջ արդյունաբերական կյանքի այդ ներվի պահպանությունը հրկիզումներից ու դժբախտ պատահարներից»։

Նավթային արքաներն ու նրանց գործակալ մուսավաթիստներն ու դաշնակները, մենշևիկներն ու էսեռները դիմում էին ամենաստոր միջոցների՝ նպատակ ունենալով խանգարել նավթի ազգայնացման գործը։ Նրանք հրդեհում ու դիվերսիոն ավերածություններ էին սարքում, նավթահորերում հափշտակում ու ոչնչացնում էին սարքավորումը։ Բանվորների հերոսական աշխատանքի շնորհիվ նավթային արդյունաբերությունը քայքայված վիճակից կյանքի կոչվեց և օրեցօր սկսեց ավելացնել արդյունահանումը։ Բաքվի նավթագործները մեծ Հոկտեմբերի հազթանակները ամրապնդելու համար կարճ ժամանակում ավելի քան 80 միլիոն փութ նավթամթերք ուղարկեցին Սովետական Ռուսաստան, որը այնքան մեծ կարիք էր զգում վառելանյութի։

Մինչև ազգայնացումը—մայիսին հանվել էր 11,4 միլիոն փութ նավթ, ազգայնացումից հետո հունիսին՝ 28,3, հուլիսին՝ 30 միլիոն փութ նավթ։ Բացի այդ, նավթի արտահանումը դեպի Սովետական Ռուսաստան, չտեսնված արագությամբ աճում էր։ Հունիսի 26-ին ընկեր Ստալինը գրում էր Գարենժոզկոմատ, որ Մոսկվա է ուղարկվել երեք մարշրուտային գնացք՝ 84 ցիստերն բենզինով, իսկ հունիսի 29-ին նա պահանջում էր շուտ փոխադրական միջոցներ հասցնել, քանի որ Աստրախանում այլևս տեղ չկա նավթամթերքները ամբարելու։

Լենինը և Ստալինը մեծ վճռականությամբ պաշտպանեցին Բաքվի բոլշևիկների ճիշտ քաղաքականությունը, հակահարված տալով բոլոր այն թշնամական տարրերին, որոնք ցանկանում էին խանգարել այդ կարևոր սոցիալիստական միջոցառման կենսագործումը։

Սոցիալիստական կարևորագույն միջոցառումներից էր նաև Կասպիական նավատորմի ազգայնացումը, որը տեղի ունեցավ նավթային արդյունաբերության ազգայնացումից անմիջապես հետո, հունիսի 6-ին։ «Երկրորդ վճռական քայլը»—այսպես էր վերնագրված ընկ. Միկոյանի «Իզվեստիա Սովետա»-յում հրապարակած հոդվածը։ Այս խնդրի կապակցությամբ ևս թշնամական տարրերը սկսեցին խանգարել Բաքվի Ժողկոմսովետին։ Ս. Շահումյանը դիմեց Լենինի և Ստալինի օգնությանը։ Նավթային արդյունաբերության ազգայնացման վերաբերյալ «...հեռագիրը հանգստություն

[1] Լենին, Երկեր, հ. 21, էջ 169։
[2] „Бакинский рабочий", № 45, 1918.

ժտցրեց, գրում է Շահումյանը։ Այժմ հենց այդպիսի պատմություն է սկսվում Կասպից նավատորմի ազգայնացման հետ։ Մախրովսկու սատրագրությամբ այսօր ստացված հեռագիրն անտեղյակություն է անըմբռնողություն է հայտաբերում։ Ամենախոնարհ խնդիրս է ժամանակին կանգնեցնել, որպեսզի չխանգարեն մեզ աշխատելու»։[1]

Ընկեր Ստալինը 1918 թ. հուլիսի 8-ին Բաքվի բոլշևիկներին գրում էր. «Կասպյան նավատորմի՞ ազգայնացման հարցում կարող եք վճռականորեն գործել... կարող եք հավատացած լինել, որ Ժողկոմսովետը Ձեզ հետ կլինի»։[2]

Լենինը և Ստալինը Սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակը ամրապնդելու համար միշտ էլ կարևոր նշանակություն են տվել պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի ամրապնդման խնդրին։ Բաքվի Ժողկոմսովետը, առաջնորդվելով Լենինի—Ստալինի ցուցմունքներով, հատուկ որոշումով խանա-բեկական հողերը հայտարարեց կոնֆիսկացիայի ենթարկված և այն հատկացրեց աշխատավոր գյուղացիությանը։ Այս կարևոր գործում աչքի ընկնող աշխատանք ծավալեց Ադրբեջանի գյուղերում Ստեփան Շահումյանի զինակից Մաշադի Ազիզբեկովը, որը նահանգական կոմիսար էր և նշանակվել էր ներքին գործերի ժողկոմի տեղակալ։

Հողը դադարում էր առևտրի առարկա լինելուց և դառնում էր համաժողովրդական սեփականություն։ Կալվածատերերի շենքերն ու ագարակները պետք է խլվեին և հատկացվեին կուլտուր-լուսավորական և կամ հասարակական այլ կարիքների, իսկ կարիքի դեպքում տրվեին նաև չքավոր հողագործներին։ Տեղերում գյուղական տնտեսության այդ կարևոր սոցիալիստական միջոցառումները անցկացնելու համար կազմակերպում էին հողային կոմիտեներ։ Ընկ. Ազիզբեկովը շրջելով ադրբեջանական գյուղերը իրեն հատուկ մեծ եռանդով կոչ էր անում ադրբեջանական գյուղացիությանը ճանաչել իրենց բարեկամին, Սովետական կառավարությանը, վերջ տալ խաների-բեկերի դարավոր լծին։

«Բակինկի բաբոչի» թերթը գրում էր, որ Ազիզբեկովը «...Ստրկացած մուսուլմանական մասսային կոչ էր անում պայքարի դուրս գալ իր դասակարգային հակառակորդների դեմ և համերաշխորեն աշխատել Ռուսաստանյան դեմոկրատիայի հետ։ Ընկեր Ազիզբեկովի եռուն գործունեությունը արդեն մեծ արդյունքներ է տվել։ Գործադիր կոմիտեում մեկը մյուսի հետևից ստացվում են սովետների իշխանությունը ճանաչող գյուղացիական հասարակությունների վճիռներ»։[3]

Ֆաթմա, Մարգաքան և մի շարք ուրիշ գյուղեր բանաձևեր կազմեցին և ամբողջ գյուղացիների ստորագրությամբ վավերացրին, որ հավատարիմ են մնում սովետական կարգերին։ Մայիսի 26-ին բացվեց Բաքվի գավառի գյուղացիների դեպուտատների Սովետների Համագումարը, որը վերածվեց չքավոր գյուղացիության և պրոլետարիատի դաշինքի ամրապնդման մի հզոր ցույցի։ Այդ օրը ադրբեջանական գյուղացիության պատմության մեջ նշանավոր օր էր։ Այդ պատմական փաստը «Բակինսկի բաբոչի» թեր-

[1] ЦАОР, ф. 130, оп. 12, դոր. 109, թ. 56։
[2] *Ст. Шаумян*, Статьи и речи, изд. 1929 г., стр. 293.
[3] „Бакинский рабочий", 68, 1918 г.

թը այսպես էր գնահատում. «Առաջին անգամ Կովկասում ամենից ավելի ծեծկված և ստրկացված գյուղացիությունը հավաքվում ու կազմակերպվում է ազատորեն, որպեսզի պաշտպանի իր դասակարգային աշխատավորական շահերը։ Այս օրը, ինչ էլ որ պատահի հետագայում կհիշի մուսուլմանական գյուղացիությունը»։[1] Ստեփան Շահումյանը իր կրակոտ ողջույնի ճառում կոչ էր անում գյուղացիությանը «միավորվել բանվորների ու հայ գյուղացիների հետ մեկտեղ Սովետական իշխանությունը պաշտպանելու համար։ Որպես միասնական ընտանիք, որպես միասնական բանակ, դուք զինված ուժով պետք է պաշտպանեք բանվորա-գյուղացիական կառավարությանն ընդդեմ բեկերի ու խանների և ընդդեմ նրանց պաշտպանի՝ Մուրքիայի»։[2]

Համագումարը կոչ արեց Անդրկովկասի ամբողջ գյուղացիությանը՝ համախմբվելու Բաքվի սովետական կառավարության շուրջը և պայքար ծավալելու բարձրացող կոնտրոռևոլուցիայի դեմ։ Համագումարի ընտրած դեպուտատների սովետի կազմի մեջ 15 հոգուց 11-ը բոլշևիկ «հումմեթիստներ» էին։ Այդ Սովետի Գործկոմի նախագահ ընտրվեց Մաշադի Ազիզբեկովը, իսկ նրա ներկայացուցիչները մտան Բաքվի սովետի Գործկոմի կազմի մեջ, որոնք տեղերը վերադառնալուց առաջ բանվորների, զինվորների և նավաստիների հետ Բաքվի սովետի միացյալ նիստ ունեցան։

Բոլոր աշխատավորներն իրենց զայրույթը արտահայտեցին Անդրկովկասի սեյմում հավաքված ժողովրդի թշնամիների՝ մենշևիկների, էսեռների, մուսավաթիստների և դաշնակների դեմ, որոնք ցանկանում էին Անդրկովկասը անջատել Ռուսաստանից և իմպերիալիստների լծի տակ դնել։ Նրանք ամենայն վճռականությամբ հայտարարեցին. «... Մենք մեր բախտը սերտորեն կապում ենք ռևոլուցիոն Ռուսաստանի բախտի հետ»։[3]

Գյուղացիների դեպուտատների սովետներ ստեղծվեցին Ղուբայի գավառի 71 գյուղերում, Լենքորանի գավառի 67 գյուղերում, Ջևադի գավառի 27 գյուղերում։ Գյուղացիների դեպուտատների համագումարներ տեղի ունեցան Շամախու, Լենքորանի, Սալյանի գավառներում։ Շամախու համագումարը ներկայացնում էր օրինակ 280 հազար գյուղական բնակչություն։ Այսպիսով բոլշևիկյան պարտիան սովետական կարգերի համար մղվող պայքարը հասցրեց մինչև գյուղական խորքերը և պայքարի դուրս բերեց ամբողջ աշխատավոր ժողովրդին՝ սոցիալիստական երջանիկ կյանք ստեղծելու համար։

Սովետական կարգերը 1918 թ. ամառվա սկզբին հաղթանակեցին Ադրբեջանի մի շարք շրջաններում՝ Լենքորանում, Սալյանում, Շամախիում, Ղուբայում։ Բաքվի բոլշևիկների օգնությամբ Սովետական կարգերը հաղթանակեցին նաև Դերբենդում։ Բաքվի հերոսական պրոլետարիատը ձգտում էր ապահովել սովետական կարգերի հաղթանակը ամբողջ Անդրկովկասում։ Ընկեր Ստալինը գրում է. «...Բաքուն, Սովետական իշխանության միջնաբերդն Անդրկովկասում, իր շուրջը համախմբելով ամբողջ արևելյան Անդրկովկասը, Լենքորանից ու Ղուբայից մինչև Ելիզավետպոլ, գենքը

[1] „Бакинский рабочий", № 97, 1918 г.
[2] Ստեփան Շահումյան, Հոդվածներ և ճառեր, էջ 165.
[3] „Бакинский рабочий", № 100, 1918 г.

ձեռքին հաստատում է Անդրկովկասի ժողովուրդների իրավունքները, որոնք բոլոր ուժերով աշխատում են պահպանել կապը Սովետական Ռուսաստանի հետ»։[1]

Ընկեր Ստալինի անմիջական ցուցումները, նրա հեռագրերն ու նամակները նոր եռանդ ու ոգևորություն էին ներշնչում Բաքվի աշխատավորներին և նորանոր սխրագործությունների կոչում։

1918 թ. հունիսին ընկ. Ստալինը Ցարիցինից ուղարկած իր ռադիո հեռագրում գրել է.

«Ռադիոյով հաղորդել Բաքվում Շահումյանին, որ ես, Ստալինս գըտնվում եմ հարավում և շուտով կլինեմ Հյուսիսային Կովկասում։ Ռոստով-Յուրդ—Պետրովսկ գիծը կարգի կբերվի ինչ էլ որ լինի։ Բաքվին օգնելու համար ուղարկվել է և կուղարկվի ամեն ինչ կանոնավոր կերպով։ Այսօր Ցարիցինից մեկնում է սուրհանդակը՝ Շահումյանին ուղղված նամակով։ Հաց կուղարկենք ինչ էլ որ լինի։ Խնդրում ենք ամրացնել Հաջիկարուլի ռազմաճակատը և չհուսահատվել»։[2]

Բաքվի պարենային և տնտեսական ծանր վիճակը բարելավելու համար ընկեր Ստալինը կազմակերպում էր Բաքվին հացով օգնելու գործը։

Լենինը հունիսի 29-ին Շահումյանին գրում էր. «Հղում եմ լավագույն ողջույններ և ցանկություններ։ Ստալինը Ցարիցինում է։ Նամակներն ուղարկեք ավելի լավ է Ստալինի միջոցով։ Ողջույն։

Ձեր Լենին»։

Լենինը 1918 թ. հունիսի 26—27-ին Պետրոգրադի Սովետի նախագահին առաջադրում է.

«Կարգադրեցեք որ անհապաղ բեռնեն և Բաքու ուղարկեն զրահագնացքներ, սպառազինության Համառուսաստանյան կոլեգիայի գերատեսչության գծով...»։[3]

* * *

Բաքվի Սովետական իշխանությունը իր գոյության հենց առաջին օրից վճռական մարտի մեջ մտավ անդրկովկասյան կոնտրռևոլուցիայի և մինչև ատամները զինված օտարերկրյա իմպերիալիստների դեմ։

Անդրկովկասի կոնտրռեոլուցիոներները՝ կապիտալիստները և կալվածատերերը տեսնելով, որ բանվորա-գյուղացիական ռևոլուցիան անխուսափելի կործանում է բերում նրանց, կայզերական Գերմանիայի և սուլթանական Թուրքիայի հրահանգով հայտարարեցին Անդրկովկասի անջատումը Սովետական Ռուսաստանից։ Ժողովրդի ոխերիմ թշնամիները՝ մենշևիկներն ու էսեռները, մուսավաթիստներն ու դաշնակները բազմաթիվ դավեր էին սարքում Բաքվի Սովետական իշխանության դեմ, բայց նրանց չարանենգ պլանները խորտակվեցին Բաքվի հերոսական պրոլետարիատի հզոր հարվածների տակ։ Այդ ժամանակ նրանք գործարքի մեջ մտան իմպերիալիստների հետ և Բաքվի Սովետական կառավարությունը ժատնեցին օտարերկրյա գիշատիչների հոշոտմանը։ «Գլխովին ջախջախված «ազգային կառավարությունները» «հարկադրված» էին դիմելու Արևմուտքի իմպերիալիստներին՝ ամբողջ աշխար-

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ, 108.
[2] „Бакинский рабочий", №110, 1918 г.
[3] Ленинский сборник, т. 34, стр. 26.

հի մանր ազգությունների դարավոր կեղեքիչների ու շահագործողների օգնությանը, ընդդեմ «իրենց» բանվորների ու գյուղացիների»[1] գրում էր ընկեր Ստալինը։ Գերմանա-թուրքական բռնակալները, որոնց ուղղակի գործակալներն էին ադրբեջանական ժողովրդի ոխերիմ թշնամի մուսավաթիստները, ցանկանում էին գրավել Բաքուն, և ամբողջ Անդրկովկասը իրենց գաղութը դարձնել։

1918 թ. Անտանտայի տերությունների, առանձնապես Անգլիայի կողմից Սովետական Ռուսաստանի դեմ երկրի տարբեր կողմերից՝ Մուրմանսկից, Արխանգելսկից, չեխոսլովակների միջոցով՝ արևելքում, Պարսկաստանի կողմից հարավում կատաղի արշավանք սկսվեց։

Բաքվի նավթը հանդիստ չէր տալիս անգլիական դավթողներին։ 1918 թ. դեկտեմբերի 24-ին «Լոնդոնի ֆինանսական նորություններ» թերթը տպագրել է Բիբի-Հեյբաթի անգլիական նավթային ընկերության նախագահի ելույթը, որի մեջ ասված է.

«...Ռուսական նավթարդյունաբերություն, որը լայնորեն ֆինանսավորվում և պատշաճ կերպով կազմակերպվում է բրիտանական ղեկավարությամբ, կարող է արժեքավոր նվաճում լինել Բրիտանական կայսրության համար»։[2]

Անգլիական իմպերիալիզմը ցանկանում էր իր ձեռքը գցել սև ոսկու քաղաքը, Հոկտեմբերյան Սոցիալիստական Ռևոլյուցիայի կարևոր ֆորպոստը Արևելքում։ Ցանկանում էր տիրել Կասպից ծովին, Հյուսիսային Կովկասին և Անդրկասպյան շրջաններին, միանալ Սիբիրի (Օրենբուրգ) կոնտրռևոլյուցիոն ճակատի հետ և ապա իրագործել իր նենգավոր պլանները Սովետական Ռուսաստանի դեմ։ Բաքվի դրավումով անգլիական իմպերիալիզմը փակում էր նաև դեպի Արևելք տանող ուղիները գերմանա-թուրքական զորքերի առաջ։

Դեռ 1918 թ. սկզբից անգլիական մի ջոկատ, գեներալ Դենստերվիլի գլխավորությամբ, Միջագետքից տեղափոխվեց Իրան և պատրաստվում էր օկուպացիայի ենթարկելու Բաքուն։ Իր ոճրագործ պլանները իրագործելու համար Դենստերվիլը հավատարիմ մնալով անգլիական իմպերիալիստներին, ուրիշի ձեռքով կրակից շագանակներ հանելու սկզբունքին, կապ հաստատեց Բաքվի կոնտրռևոլյուցիոներների՝ մենշևիկների, էսեռների ու դաշնակների հետ և սկսեց արտաքին ու ներքին թշնամիների կոալիցիոն ուժերով Բաքուն գրավելու դավադրության նախապատրաստությունը։ Դեներալ Դենստերվիլը հազարից քիչ զինվոր ուներ, մինչդեռ Բաքվի միայն կարմիր գվարդիայի ջոկատները կազմում էին 6 հազարից ավելի։ Նրանք գիտեին, որ բաց դաշտում չի կարելի հաղթել Բաքվի հերոս պրոլետարիատին, դրա համար էլ անգլիական իմպերիալիստները սկսեցին իրենց կողմը գրավել բոլոր հակասովետական բանդաներին և Բաքվի Կոմունայի ներսում դավադրություն կազմել, այն քայքայելու համար։

Դենստերվիլը իր գործակալը դարձրեց հայտնի հայ խմբապետ դաշնակցական Անդրանիկին, որը իր ջոկատով պայքարում էր Թուրքիայի դեմ։ Այդ համապատասխանում էր Անգլիայի շահերին, Բաքուն իրենց

[1] Ի. Սթալին, *Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը*, Երևան, 1935 թ., էջ 78։
[2] ИМЭЛ Азерб. филиал, „Труды", т. 8, стр. 68.

ձեռքը գցելու համար։ Անդրանիկը դիմեց Բաքվի Ժողկոմսովետին, որ ինքը ենթարկվում է Սովետական իշխանությանը, սակայն նա փաստորեն գործում էր անգլիական իմպերիալիզմի օգտին։

Դաշնակցականները Ազգային Խորհրդի անդամներից մեկին, Տեր-Ղազարովին գործուղում են Էնզելի, որը հանդիպում է ունենում գեներալ Դենստերվիլի հետ և ապա նրան դաշնակցականների, էսեռների և մենշևիկների անունից Բաքու հրավիրում։

Դենստերվիլի մյուս հենակետը Բիչերախովի կազակական ջոկատն էր, որը հյուսիսային Պարսկաստանում պայքարում էր Փյուչուկ խանի գլխավորած ջենգելիցիների դեմ, որպեսզի անգլիական ջոկատների համար ճանապարհ բացի դեպի Պովկաս։

Բիչերախովը ևս անգլիական հրամանատարության ցուցմունքով դիմեց Բաքվի Ժողկոմսովետին, որ պատրաստ է միատեղ կռվելու գերմանա-թուրքական բանակի դեմ։

Սովետական Բաքուն շրջապատելու համար անգլիացիները իրենց ազդեցության տակ առան անդրկասպյան կոնտրռևոլուցիոն բանդաները և համաձայնության եկան անդրկասպյան կառավարության հետ բոլշևիկների դեմ համատեղ կռվելու համար։ Այդ համաձայնագիրը ստորագրել էին անգլիական կառավարության ներկայացուցիչ գեներալ-մայոր Մալեսոնը և Անդրկասպիայի կոնտրռևոլուցիոն կառավարության ներկայացուցիչ Դոխովը։

Սկզբում անգլիացիները իրենց գործակալ էսեռների և մյուս հակասովետական պարտիաների միջոցով պատրաստում էին դավադրության միջոցով տապալել Բաքվի Ժողկոմսովետի իշխանությունը։ 1918 թ. հունիսի առաջին կեսերին էսեռները բրիտանական հյուպատոս Մակ-Դոնելի ցուցմունքով պատրաստվում էին արձակել Բաքվի Սովետը և ձերբակալել Բաքվի կոմունարներին՝ Շահումյանի գլխավորությամբ։ Էսեռները անհաջող մահափորձ կատարեցին Շահումյանի և Ջափարիձեի դեմ։

Անգլիական իմպերիալիստները իրենց չարանենգ գործերի համար չէին խնայում ոսկին։ Էսեռները գրամ էին ստանում Բիչերախովի միջոցով և անմիջապես Պարսկաստանի անգլիական հրամանատարությունից։

Գնալով ավելի ու ավելի է դժվարանում սովետական Բաքվի վիճակը, որը օղակված էր մինչև ատամները զինված թշնամիներով։ Արևմուտքից արշավում էին գերմանա-թուրքական ինտերվենտները՝ միացած մուսավաթական բանդաներին, հյուսիսից գրոհում էին իմամ Գոցինսկու հրոսակախմբերը, իսկ Իրանից սպառնում էին անգլիական ինտերվենտները իրենց գործակալ մենշևիկների, էսեռների և դաշնակների կոնտրռևոլուցիոն ոհմակին միացած։

Դաշնակների դավաճանության հետևանքով ճակատ բացվեց մինչև Շամախի և դեպի Բաքու։ Դրանից էլ օգտվեց Բիչերախովը և դավաճանաբար թողեց ռազմաճակատը սովետական բանակի համար ամենակրիտիկական ժամենտին, կատարելով անգլիական հրամանատարության հրահանգը։ Այդ նույն ժամանակ դաշնակցական ջոկատները հրաժարվեցին կռվել հարձակվող գերմանա-թուրքական զորքերի դեմ։ Այդ բոլորը արվում էր ստիպելու համար Ժողկոմսովետին՝ անգլիացիներին հրավիրելու Բաքու։

Բաքվի աշխատավորները և Կարմիր Բանակի հերոս մարտիկները իրենց զայրույթն էին արտահայտում անգլիական իմպերիալիստներին Բաքու հրավիրելու չարամիտ պլանի դեմ։ Նրանք գրում էին, թե այդ չարագործները «... դանակ են խրում մեր թիկունքը, որ այսպես կռվում ենք ռևոլուցիոն գիրքերում։ Ամեն տեսակ իմպերիալիստներից օգնություն ոսպասել կարող են միայն վախկոտները, դավաճանները և բանվորա-գյուղացիական ռևոլուցիայի թշնամիները...»[1]

Բաքվի Ժողկոմսովետը կատարելով Լենինի և Ստալինի ցուցումները վարում էր ինքնուրույն քաղաքականություն. նա հրաժարվեց անգլիացիների «օգնությունից» և վճռական դիմադրություն ցույց տվեց գերմանա-թուրքական ներխուժումներին։

Աշխատավորների կատաղի թշնամիները, մուսավաթիստները, մենշևիկներն ու դաշնակները կատաղի պայքար սկսեցին բոլշևիկների դեմ, քայքայիչ աշխատանք տանելով պարենավորման օրգաններում։ Նրանք վիժեցնում էին հացի մատակարարումը, որպեսզի սովի ճիրաններում նեղելով, բանվորներին ստիպեին համաձայնել անգլիացիների հրավիրմանը Բաքու։ Չնայած այդ բոլորին, Բաքվի կոմիսարները Լենինի—Ստալինի պանծալի զավակները, վճռական պայքար են մղում ներքին և արտաքին թշնամիների դեմ։ 1918 թ. ընկեր Ստալինը, որ ամենաջերմ օգնություն էր ցույց տալիս Բաքվի կոմիսարներին, հուլիսի 21-ին իր հեռագրով հայտնում էր.

«Ի կատարումն Սովետների 3-րդ համագումարի որոշման, ես Բաքվի Ժողկոմսովետից պահանջում եմ անվերապահորեն կենսագործել անկախ միջազգային քաղաքականություն և վճռականորեն պայքարել օտարերկրյա կապիտալի գործակալների դեմ։»

Հաջորդ օրը Լենինը Շահումյանին հեռագրեց, պահանջելով Ի. Վ. Ստալինի հեռագրի լիովին իրագործումը։

Չնայած այդ ժամանակ Ցարիցինի ռազմաճակատում ևս վիճակը ծանր էր, ընկեր Ստալինը չէր թուլացնում իր ամենօրյա ուշադրությունը Բաքվի նկատմամբ։ Դրա ապացույցն է ընկեր Ստալինի 1918 թ. օգոստոսի 1-ի կարգադրությունը ռեզերվների հրամանատարին՝ «Անմիջապես Բաքվի Ժողկոմսովետի տնօրինությանն ուղարկել մեկ մարտկոցի (6 թնդանոթ) անձնակազմ և երկու գնդացրային խումբ։ Կատարման մասին զեկուցել։ Ռազմական Խորհրդի անդամ Ստալին»։[3]

Լենինը ցուցումներ էր տվել Սարատովի և Ցարիցինի զինկոմներին, արագացնել Բաքու մեկնող գնդի տեղ հասնելը։ Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի ռազմական խորհուրդը մի դիվիզիա կազմավորեց Բաքու ուղարկելու համար։ Աստրախանում նույնպես զորամասեր են կազմավորվում Բաքու ուղարկելու համար։

Անգլիական ինտերվենտները ձեռք էին առնում բոլոր միջոցները

---

[1] Известия Советов рабоч., красноарм., матросск. и кресть. деп. Бакинского района, № 150, 1918 г.

[2] „Правда". № 260, 1938 г. (20-го сентября).

[3] Партархив при ЦК КП (б) Азербайджана, п. 3, д. 6, л. 6.

խանգարելու համար Բաքվին օգնության հասնող զորամասերի առաջընթացին։ Այդ նպատակով Աստրախանի շրջանում անգլիացիների ժամանակցությամբ սպիտակ գվարդիական խռովություն է բարձրացվում Սովետական իշխանության դեմ։ Բաքվի համար պատրաստված կորպուսը ըզբաղվում է խռովարարներին ճնշելու գործով։

Բաքվի վիճակը հետզհետե ծանրանում էր։ Կոնտրռևոլուցիոն բանգաները օտար կապիտալի հովանավորությամբ իրենց քայքայիչ աշխատանքն էին կատարում։ Հուլիսի 25-ին Բաքվի սովետի նիստում կատաղի պայքար է ծավալվում մի կողմից բոլշևիկների, իսկ մյուս կողմից էսեռների, դաշնակների ու մենշևիկների կոնտրռևոլուցիոն բլոկի միջև։ Անգլիական զորքերին Բաքու հրավիրելու հարցի շուրջը։ Կոնտրռևոլուցիոն այդ շայկային, ժողովրդի գագրելի թշնամիներին, հաջողվում է Բաքվի սովետում անցկացնել իրենց դավաճանական բանաձևը, որը բացում էր դռները անգլիական կապիտալի գործակալների առաջ։

Գերմանա-թուրքական զավթիչների և մուսավաթական վարձկանների, ինչպես և անգլիական իմպերիալիստների ու նրանց գործակալների՝ էսեռների, մենշևիկների ու դաշնակների բլոկի ծանր ճնշման տակ Բաքվի Սովետական իշխանությունը ժամանակավորապես ընկավ։ Բաքվի սովետի 1918 թ. հուլիսի 31-ի նիստում ժողկոմսովետը ընկեր Ս. Շահումյանի գլխավորությամբ ցած դրեց իր լիազորությունները, իսկ օգոստոսի 1-ին էսեռները, մենշևիկներն ու դաշնակները կազմեցին «Ցենտրոկասպիայի դիկտատուրա» կոչվող իբրև կոնտրռևոլուցիոն կառավարությունը։ Օգոստոսի 4-ին նրանց հրավերով Բաքու մտան անգլիական իմպերիալիստները, որոնք անմիջապես ձեռնամուխ եղան նավթի կողոպտմանն ու արտահանմանը։

Անգլիացիները կարճ ժամանակում էնգելի ուղարկեցին մոտ 40 հազար փութ բենզին, պահանջելով ամեն ամիս 80 հազար փութ բենզին Միջագետքի անգլիական բանակի կարիքների համար, խոստանալով 10 հազարանոց բանակ բերել Բաքուն պաշտպանելու, բայց մինչև վերջն էլ նրանց ուժերը 900 զինվորից ու սպայից չանցան։ Անգլիացիները կողոպտեցին Բաքվից մոտ 5 միլիոն փութ նավթ։

Բաքվի բոլշևիկները օգոստոսի 10-ին իրենց կոնֆերենցիայում որոշեցին հիմնական ուժերը էվակուացնել Աստրախան և ապա, նոր ուժեր ստանալով վերադառնալ Բաքու, Սովետական իշխանությունը վերականգնելու համար։ Օգոստոսի 14-ին, երբ Բաքվի բոլշևիկները նավով ճանապարհում էին դեպի Աստրախան, «Ցենտրոկասպիայի դիկտատուրայի» կառավարությունը կալանքի տակ առնելով նավը, նրանց ետ բերեց և Շահումյանին, Ջափարիձեին, Ազիզբեկովին, Ֆիոլետովին և ուրիշներին նետեց բանտ։

Այդ ծանր օրերին Լենինը Բաքվի մասին լուր չունենալով, օգոստոսի 9-ին հեռագրում է Աստրախան. «Բաքվի դրությունը ինձ համար այնուամենայնիվ պարզ չէ։ Ո՞վ է իշխանության գլուխը կանգնած։ Ո՞րտեղ է Շահումյանը։ Հարցում արեք Ստալինին և գործեցեք բոլոր հանգամանքների նկատառումով։

Դուք գիտեք, որ ես լիովին վստահում եմ Շահումյանին։ Այստեղից

անկարելի է պարզել դրությունը և հնարավորություն չկա արագ օգնելու Լենին»։[1]

Անգլիացիների գալուց հետո Բաքվի դրությունը ավելի վատթարացավ։ Անգլիական իմպերիալիստները երկրում մտցրին ծանր ռեժիմ, մահապատիժը, ծեծը, ռազմադաշտային դատարանները, նրանց հիմնած «Դաշնակից տերությունների ոստիկանության կոմիսարիատը» մահ ու սարսափ էր տարածում ժողովրդի մեջ։

Անգլիացիների գազանությունների մասին ցայտուն փաստեր են տալիս արխիվային նյութերը։ Ելիզավետպոլից ստացված մի հեռագիր հետևյալն է հայտնում.

«Այսօր, հունիսի 7-ին, երեկոյան ժամը 6-ին անգլիական գնդային ավագ սերժանտը ծեծեց երկաթուղային մի բանվորի, կայարանի ուղիները մաքրող սանիտարին՝ իր պարտականությունները կատարելու ժամանակ»։[2]

Ժողովրդի դավաճանները անգլիացիներին Բաքու հրավիրելով դարձան նրանց ծառաներն ու հլու կամակատարները։ Ահա թե ինչ է գրում այդ մասին ընկեր Ստալինը. «Անգլիացիներին Բաքու հրավիրելով և բոլշևիկներին մատնելով՝ Բաքվի մենշևիկներն ու էսեռները մտածում էին «օգտագործել» անգլիական «հյուրերին» որպես ուժ, ընդ որում ենթադրվում էր, թե երկրում որպես տերեր կմնան մենշևիկներն ու էսեռները, իսկ «հյուրերը» կգնան իրենց տները։ Փաստորեն հակառակը ստացվեց. «հյուրերը» դարձան անսահմանափակ տերեր, էսեռներն ու մենշևիկները դարձան 26 բոլշևիկյան կոմիսարների չարագործ ու ստոր սպանության անպայման մասնակիցներ...»[3]

Բոլշևիկները շարունակում էին պայքարը, ջանալով ստիպել Ցենտրոկասպիայի դիկտատուրային Սովետական Ռուսաստանի օգնությանը դիմելու—անգլիացիներին վռնդելու Բաքվից։ Սեպտեմբերի 13-ին «Սևանն» շոգենավով Աստրախանից ժամանեց Սովետական Ռուսաստանի դելեգացիան, որը Ցենտրոկասպիայի դիկտատուրային առաջարկեց աղատել բանտարկված կոմիսարներին և շարունակել Ռուսաստանին նավթ մատակարարելը։ Դելեգացիան խոստացավ Աստրախանում եղած զորքն ու ռազմական հանդերձանքը Բաքու տեղափոխել գերմանա-թուրքական զորքերի դեմ միատեղ կռիվ մղելու համար։ Բայց կոնտրռևոլուցիոն դավաճանները խորհրդակցելով իրենց անգլիական տերերի հետ, մերժեցին դելեգացիայի առաջարկը և պատրաստվեցին փախչել Բաքվից։ Քաղաքը թուրքական զորքերի հոշոտմանը հանձնելով։

Անգլիացիները դեռ սեպտեմբերի 13-ին, թուրքական հրանոթների առաջին համազարկը լսելով սկսեցին փախչել Բաքվից իրենց հետ մեծ քանակությամբ ավար տանելով։ Դենստերվիլի գլխավորած անգլիական թալանչիները Բաքվից հեռանալուց առաջ նավերն էին բեռնել նավահանգստում եղած բամբակի հակերը։

Ընկեր Միկոյանը գլխավորելով Բաքվի բոլշևիկներին հսկայական աշ-

[1] ЦАОР, ф. 139, оп. 12, д. 115, л. 102.
[2] ЦГИА Азерб. ССР, фонд МВД, оп. 4, д. 93.
[3] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 285—286։

խատանք ծավալեց կոմիսարների դահիճ «Ցենտրոկասպիայի դիկտատուրայի» կոնտրռևոլուցիոն դերը մերկացնելու ուղղությամբ։ 1918 թ. օգոստոսի 28 ին, երբ կոմիսարները առռապում էին բանտում, Բաքվի աշխատավորներն ցուցադրելով իրենց անսահման սերն ու նվիրվածությունը, ծանր տեռորի պայմաններում Բաքվի սովետի անդամ ընտրեցին Շահումյանին, Ջափարիձեին, Ազիզբեկովին, Ֆիոլետովին, Կորգանովին և ուրիշներին։

Օտարերկրյա ինտերվենտներն ու նրանց լակեյ կոնտրռևոլուցիոն բանդաները վախենալով Բաքվի աշխատավորների դատաստանից, Բաքվի հերոս կոմիսարներին գաղտագողի հեռացրին Բաքվից և 1918 թ. սեպտեմբերի լույս 20-ի գիշերը հեռավոր Անդրկասպյան անապատում գաղտնաբար հոշոտեցին։ Կոմունիզմի անվեհեր մարտիկների շուրթերին սառել էին բոցաշունչ խոսքերը. «Մենք մեռնում ենք կոմունիզմի համար։ Հեցցե կոմունիզմը...»։

Իմպերիալիստական դաղութարար դահիճների այդ չարանենգ գործունեությունը ցույց տվեց, «որ միայն ոտից-գլուխ նեխած ու ամեն մի բարոյական կերպարանք կորցրած իմպերիալիստական մարդակերները կարող են կարիք ունենալ գիշերային սպանությունների և հակառակ բանակի անզեն քաղաքական աշխատողների վրա ավազակային հարձակումներ կատարելու»[1]։

Բաքվի բոլշևիկները, մինչև վերջն էլ նվիրված պրոլետարիատի գործին, Լենինի—Ստալինի մեծ գործին, հերոսաբար մարտնչեցին սոցիալիզմի համար։ Այն մեծ գործը, որի համար զոհվեցին Բաքվի 26 հերոս կոմիսարները, այժմ բազմահազար պտուղներ են տվել։ Սովետական հզոր երկիրը, սովետական երախտագետ ժողովուրդը մեծագույն երախտագիտությամբ հավերժացնում է իր զավակների անմահ հիշատակը։

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 285։